

Անի Հակոբյան

1086 բառ

Իմ Երագած Հայաստան

«Ով հայ ժողովուրդ, քո միակ փրկությունը քո հավաքական ուժի մեջ է»: Եղիշե Չարենցի այս խոսքերը ես բազմիցս եմ լսել մեր հայերենի ուսուցիչներից: Որքան մեծանում ու հասակ եմ առնում այնքան ավելի շատ եմ հասկանում դրանց կարևորությունն ու բուն իմաստը, թե որքան անհրաժեշտ է մեր միասնականությունը, որպեսզի մեծ գերտերությունները մեզ հետ հաշվի նստեն ու մենք ոչ միայն աշխարհին լսելի դարձնենք մեր ձայնը, այլ կարողանանք կերտել մեծ ու հզոր Հայաստան, ինչի համար ապրել, երագել ու իրենց կյանքն են զոհել մեր նախապապերն ու մեր նորօրյա հերոս զինվորները:

Արցախյան վերջին պատերազմը ևս ապացուցեց, որ մենք պիտի վերանայենք ինքներս մեզ ու մեր սխալները սրբագրելով, մեր ողնաշարը ուղղենք: Նվնվալու, մեկս մյուսին մեղադրելու փոխարեն, գործի լծվենք ու պատասխանատվություն կրենք մեր այդ փոքրիկ հողի ու հազարավոր նահատակված զինվորների արյան համար ու արդեն պայքարենք ոչ թե իրար դեմ, այլ հանուն մեր միասնական հայրենիքի բարօրության...

Պատերազմի հետևանքները մեզանից յուրաքանչյուրը զգում է իր սեփական մաշկի վրա, նահատակված զինվորների արյունը դեռ տաք է, ցավը՝ անբուժելի, սակայն մենք իրավունք ու հնարավորություն չունենք անցյալով ապրելու և տեղի տալու, որ մեր ցավը մեզ սպանի ու էլ ավելի թուլացնի: Մենք պիտի ուժեղ լինենք ու կարողանանք վերագտնել մեզ ու մեր ազգային արժեքներով վեր բարձրանալ ու բարձրացնել մեր երկիրը այս օրհասական վիճակից: Եթե մեր բոլորիս գերնպատակն է ունենալ բարեկեցիկ և հաջողակ

ապագա, ես առաջնահերթ տեսնում եմ, որ Սփյուռքը, որպես մեծ ներուժ պիտի ամբողջությամբ ներգրավվի Հայաստանի վերակառուցման գործին, ոչ միայն ֆինասական օգնություններով, որոնք երբեմն չեն ծառայում իրենց իսկական նպատակին, այլ պետք է կազմակերպել ներգաղթ, ստեղծել այնպիսի պայմաններ, որ մենք առանց մեկ վայրկյան կասկածելու, վերադառնանք հայրենիք ու մեր գիտելիքներն ու կարողությունները, օտար երկրներին տալու փոխարեն, ծառայեցնենք մեր հայրենիքին :

Իմ կարծիքով քաղաքաշինության այս գործընթացի մեջ մեծ դեր պիտի ունենան նաև քաղաքական կուսակցությունները թե՛ Հայաստանում և թե՛ Սփյուռքում. բոլորս պիտի հավաքվենք մեկ գաղափարի ու նպատակի շուրջ՝ մի կողմ դնելով մեր անձնական շահերն ու հետաքրքրությունները: Ու եթե տարաձայնություններ կան, ապա նրանք պիտի լինեն առողջ և հօգուտ միայն մեր հայրենիքի բարգավաճման :

Հաջորդ քայլը, որ մենք պիտի կատարենք կրթության բնագավառն է: Իմ կարծիքով մենք պիտի ավելի լուրջ վերաբերենք այս հարցին ու պիտի կարողանանք լավ մասնագետներ ունենալ, այն ոլորտների մեջ, ինչը կօգնի մեր երկրի տնտեսության զարգացմանը, այլև իրենց գործին տեղյակ մարդիկ, որ կկարողանան աշխարհի տարբեր աստյաններում պաշտպանել Հայաստանի շահերը :

Մեզ հարկավոր են լավ դիվանագետներ, լավ մշակույթի գործիչներ, քաղաքական ակտիվիստներ, մարզիկներ ու մարզիչներ, գիտնականներ, գյուտարարներ ու գինվորականներ:

Նոր սերունդը լինի Հայաստանում կամ սփյուռքում պիտի ակտիվորեն մասնակցի այս շարժմանը, որի անունը ես դնում եմ հայրենասիրություն. բառ, որ ոչ թե ծեծված ու արժեքազրկված մի տառերի խումբ կլինի, այլ մի կարևոր արժեք, որ մեզ հայերիս, ինչպես աշխարհի բոլոր ազգերին հարկավոր է ապրելու ու ապրեցնելու համար :

Այսօր հայ ժողովուրդի ճակատագիրը կախված է մեզանից, ինչպես երբեք: Մենք պետք է կարողանանք պահպանել մեր պետության և նրա կառավարման համակարգի կայունությունը: Մենք իրավունք չունենք տրվել հույզերին և թույլ տալ քայլեր, որոնք էլ ավելի կբարդացնեն ներկա իրավիճակը: Ես հնարավորություն եմ տեսնում միավորվելու մեր հասարակության բոլոր ուժերին՝ հայ մտավորականությանը, հասարակական գործիչներին, այս իրավիճակից դուրս գալու ճիշտ լուծումներ գտնելու համար:

Հայաստան այցելելուց առաջին անգամ, ես ինձ զգում էի օտար իմ սեփական հայրենիքում: Փողոցներով քայլելիս ծնողներս վերհիշում էին իրենց մանկությունը, սակայն ես չէի կարողանում այդ պատմությունների մեջ ինձ գտնել: Երբ վերադարձա Հայաստանից հասկացա, որ ես իմ սպասածից ավելի եմ սիրում այդ երկիրը, որտեղ չեմ ծնվել, սակայն գենետիկորեն կրում եմ այդ երկրի յուրաքանչյուր բան, սկսած տաքարյունությունից, աշխատասիրությունից ու այն բանից, որ ես հստակորեն սիրում ու տիրապետում իմ մայրենի լեզվին ու անկախ իմ կամքից հայերեն եմ մտածում: Չնայած ես ծնվել մեծացել եմ Ամերիկայում, իմ երակներում չի դադարել հոսել հայի արյունը: Մանկապարտեզից հաճախել եմ հայկական դպրոց, որտեղ ուսուցիչներս անմնացորդ սեր են սերմանել հայրենիքիս հանդեպ:

Այս պատերազմի պատճառով մենք կորցրեցինք մի ամբողջ սերունդ: Նրանք զոհվեցին հանուն հայրենիքի, մենք պիտի ապրենք հանուն այդ հայրենիքի, որպեսզի նրանց զոհաբերությունը լինի արդարացված: Ես հպարտ եմ, որ հայ եմ, որ տիրապետում եմ իմ մայրենի՝ հայոց լեզվին, որ իմ բառապաշարը օր-օրի ընդլայնվում է, որ կարողանում եմ առանց դժվարության հասկանալ, գրել ու կարդալ, որ լեզվի լավ իմացությունը ինձ հնարավորություն է տալիս հետևելու ու հասկանալու հայաստանյան լուրերին:

Ամենակարևորը ես հպարտ եմ իմ հայկական ոգիով , որ ինձ առաջ է մղում դառնալու ավելի լավը , որպեսզի մի օր նաև ծառայեմ իմ հայրենիքի բարգավաճման գործին...

Իմ դերը Հայաստանի և Արցախի վերականգնման ճանապարհին կարող է չնչին երևալ համեմատած Հայաստանի քաղաքացիների, բայց ես ինձ ավելի պակաս հայ չեմ համարում ու իմ պարտականությունն ունեմ իմ հայրենիքին հանդեպ, որպես հայ մարդ, որի երակներում հայկական արյուն է հոսում, մարդ, որ ապրում է հայրենիքի հոգսերով ու ցավերով :

Մինչ այդ, երբ կլինեմ կայացած ու կրթված անհատականություն, ես ընդգրկված եմ բոլոր հնարավոր միջոցառումներում, որոնք կոչված են մի փոքր մեղմացնելու մեր հայրենակիցների հոգսերը, անհարմար եմ զգում բարձրաձայնելու, բայց միևնույն ժամանակ ուզում եմ հպարտորեն ասել, որ ես կարողացա իմ դասընկերուհու հետ միասին կազմակերպել դրամահավաք և ամբողջ հասույթը հասցնել Արցախից տեղահանված իմ հայրենակիցներին,ու գիտեք ինչն է հետքարքիր, օգնելով նրանց, ես ինձ կարողացա ավելի օգտակար լինել... այս իմ արարքով, ես ինձ դարձրի ավելի լավը, ավելի ուժեղացա, մի քիչ ավելի հայացա, ու այն կապը, որ առաջին այցելության ժամանակ չէի զգացել, զգացի... ու այն արյան կանչն էր..., որ երբեք չի դադարում լռել...

Այս անդրադարձը ինքնանպատակ չէր. ես հավատում եմ, որ յուրաքանչյուր հայ, պետք է իր ներդրումը ունենա մեր հայրենիքի վերակառուցման գործին, շատ արդյունավետ կլինի, որ աշխարհի տարբեր ծայրերում ապրող մեր հայրենակիցները իրենց առջև պարտականություն դնեն, և իրենց հոգու տուրքը մատուցեն հայրենիքին: Կարծում եմ շատերիդ մտքով է անցել այս մասին, բայց մեզանից մեկը պիտի կարողանա համակարգել այնպիսի մի ծրագիր, որ մենք որոշակի գումար հատկացնենք մեր երկրին, ինչպես ասենք արվում է Հայաստանում. եթե հայրենիքում ապրող և բավական քիչ

վարձատրվող մարդը վճարում է զինվորների ֆոնդին հազար դրամ, մենք դա կարող ենք անել նույնպես:

Արցախյան պատերազմից հետո ինձ հնարավորություն է տրվել Հայաստանի սահմանամերձ գյուղերում ապրող երեխաներին առցանց անզլերեն սովորեցնել: Երեխաները հավաքվում են փոքր սենյակներում՝ առանց վառարանի ցուրտ օրերին, մթնայան մեջ համակարգիչի լույսի տակ, անհամբեր սպասում են դասընթացին: Ամեն մի սենյակում 40-ից ավել աշակերտ կա, սակայն միայն՝ 3 համակարգիչ: Այդ պայմաններից նրանք չեն դժգոհում և յուրաքանչյուր դասին նրանց ժպտերես աչքերը լուսավորում են մութ էկրանները: Ես նպատակ ունեմ ապագայում գումար հավաքել և համակարգիչներ գնել նրանց համար: Սա երեխաների համար, բայց մեզանից ամեն մեկը կարող է իր բաժին լուման ներդնել որևէ ոլորտում...

Չեմ կարծում, որ անհնարին է ամսեկան մի սուրճ քիչ խմել և փոխարենը այդ գումարը փոխանցել Հայաստանի բյուջե: Այդ չնչին թվացող գումարը, կարող է կրկնապատկվել ու բազմապատկվել ու մենք կարող ենք ազգովի հազար հոգս հոգալ, վճարել անվճարունակ մի ուսանողի կրթաթոշակ, բուժել մի հիվանդի վերք ու այսպես շարունակ...

Հայաստանի փողոցներով քայլելիս ես չէի կարողանում զարմանքս զսպել... Մենք ունենք հրաշալի երկիր, որ ունի խնդիրներ, սակայն եթե մեզանից յուրաքանչյուրը կրի այդ խնդիրները լուծելու պարտականության մի փոքրիկ մաս, մենք կդառնանք հզոր երկիր... միայն մնում է լսել այդ արյան կանչին... պատկերացնում եք, թե որքան լուսավոր կլինեն մեր առավոտները, եթե բոլորս համախմբվենք այն երկնքի տակ, որը մի անուն ունի՝ Հայաստան...